

կի ու հերշելի արբանեակներն ալիւ  
ըենց մոլորակներուն վրայ կը պտըտին,  
ինչպէս որ նոյն մոլորակները արեւուն  
վրայ կը պտըտին :

Դիսաւորները խիստ արտակեղբուն  
շրջաններ ունին . երբեմն գիսաւոր  
մը խիստ կը մօտենայ արեւուն, անանկ  
որ անոր ձառագայթներուն մէջ կը  
ծածկուի, երբեմն ալան աստիճան կը  
հեռանայ արեւէն՝ որ հաւանական  
կ'երենայ թէ մեր մոլորակաց դրու-  
թենէն դուրս կ'ելլէ, ու հարիւրաւոր  
տարիներ մեզի չերենար :

Ո՞լորակներուն արեւուն վրայ պտը-  
տիլը կը ցուցուի նաև լուսնթագի  
արբանեակներուն խաւարմունքէն,  
որուն վրայ ուրիշ անգամ պիտի խօ-  
սինք : Իս երեսյթները դիտելով՝ ի-  
մացուած է մոլորակներուն արեւէն  
ունեցած հեռաւորութեան չափը . և  
աս հեռաւորութիւնները խիստ քիչ  
տարբերութիւն կ'ընեն, երբոր մոլո-  
րակները իրենց թաւալման ընթացք-  
ները կը կատարեն . որով բոլոր մոլո-  
րակաց շարժումն ալ զբեթէ միակերպ  
կ'ըլլայ :

Դարձեալաս երեսյթները իրարու-  
հետ բաղդատելով՝ իմայուած է թէ  
արեւը ամէն մոլորակաց պարունակնե-  
րուն կեղբոնը կեցած է, և թէ մոլո-  
րակները իրապէս կը դառնան արեւուն  
չորս դին . ուր ընդ հակառակն մեզի  
այնպէս կ'երենայ թէ արեւը կը դառ-  
նայ երկրիս վրայ : Ի՞այց մենք յաջորդ  
յօդուածին մէջ աւելի տեղն՝ ի տե-  
ղը կը ցուցընենք՝ թէ ինչու համար  
մոլորակները արեւուն վրայ կը դառ-  
նան, ու չէ թէ արեւը մոլորակներուն  
վրայ :

Հ . Մ . Ս

<sup>1</sup> Աւորութիւն աւան կ'ըսուի՝ երբոր աստղ մը  
միակերպ նոյն գծին վրայէն չքալելով իրեն ըն-  
թացքը կը փոխէ :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ո՞ւրդուս երէրորդ հասակին վրայ, որ է  
պատանէ էլութիւն :

Ո՞ւրդուս երկրորդ հասակը, այս-  
ինքն պատանեկութիւնը, տասուեր-  
կու կամտասնը բարիէն կը սկսի  
աշխարհքիս բարեխառն կողմերը . ու-  
րիշ տեղուանք կիմայէն, տղոց մար-  
մնոյն կազմուածքէն, կերակուրնե-  
րուն տեսակէն ու քանակէն, ջղերուն  
ուժովնալէն և անդամներուն շուտ ա-  
ձելէն՝ պատանեկութիւնն ալ կրնայ  
շուտ կամուշ սկսիլ : Ի՞այց ինչպէս որ  
հաւանական է՝ ո՞ր և իցէ երկիր ա-  
րիւնային կազմուածք ունեցող տղա-  
քը՝ որ աւելի վառվըռուն, սրտոտ ու  
զօրաւոր կ'ըլլան, շուտով պատանե-  
կութեան հասակը կը սկսին . և որով-  
հետեւ ան միջոցին տղոց մարմինը բո-  
լորովին կը հաստատուի ու կը զօրա-  
նայ, բանականութիւննին ալ կը բա-  
ցուի . իրենց բարյական դաստիա-  
րակութեան և ուսմունք սորվելու  
ամենէն յարմար միջոցն ալ ան ատենն  
է . անոր համար ամենեկին պէտք չէ  
անհոգ կենալիրենց հարկաւոր եղած  
բաները յարմար ժամանակին սորվե-  
ցընելու . վասն զի ետքը անոնց պտու-  
զը պիտի վայելեն :

Իսկ ան տղաքն որ կամ իրենց ան-  
հոգութեամբը և կամ իրենց ծնողաց  
անհոգութեամբը աղէկ չեն դաս-  
տիարակուիր, ու բան չեն սորվիր,  
մանաւանդ թէ շատ անգամ ծնողաց  
ու վարպետներուն խօսքերը բանի  
տեղ չդնելով, ու անոնց հրամանը  
չկատարելով պատանեկութե սքանչե-  
լի տարիները անպտուղ կ'անցընեն,  
ետքը կ'ըլլան թշուառ, ու մարդկային  
ընկերութեան անոգտակար . անկէ  
ետեւ փուծ տեղը իրենց դժբաղդու-  
թեանը վրայ կուլան :

Ի՞այց որովհետեւ պատանեկութե  
ատենը մարմինը աձելու ժամանակ՝  
երբեմն բնական դժուարութիւն մը

կը զգայ , ան պատճառաւ հիւանդութիւն ալ կրնայ գալ տղուն վրայ , պէտք չէ միտքը չափէ գուրս յոգնեցընել , հասա չափաւոր բան սորվեցընելու է : Կատ անգամ ալ կ'ըլլայ որ տղաք պատանեկութեան ժամանակը յանկարծ կը սկսին մեծնալու հասակ նետել . մկանունքները աւելի կը հաստընան , կուրծքը աւելի կը լայննայ , շնչառութիւն աւելի կ'երկըննայ , մորթին վրայ աղուամազեր կ'ելլեն , ձայնի գործարանները կը շտկուին ու ձայնը կը հաստընայ , թեերն ու ծնկուըները կ'երկըննան ու կ'ուժովնան , արտաքին զգայութեանց գործարանները կ'ընդարձակին և աւելի կ'արթըննան . քունը կը թեթենայ ու հոգւոյն կարողութիւները կարծես թէ նոր կենդանութիւնանեն :

Տղոցմէ ոմանք տասնըհինդերորդ տարիին ետեւ չեն ածիր , ոմանք ալ անոր ներհակ՝ ինչուան քսանուերկուերորդ՝ նաև ինչուան քսանուիրեքերորդ տարին կը մեծնան . բայց ասոնցմէ շատերը նիհար ու բարձր կ'ըլլան , մկանունքնին տկար , ու սրբունքնին վատուժ . միայն թէ քանի որ տարիքով առաջ երթան՝ պարապտեղուանքը մսով կը լեցուին , անդամները կը հաստընան , ջղերը աւելի կը զօրանան , ու երեսներորդ տարին հասած չհասած՝ մարդս իրեն բնական կազմութեանը ամենէն կատարեալ հասակը կը մտնէ :

Հ . Մ . Տ

|| նասակար իւնդանեաց ու բուսոց օգուաները :

Այս սարհակուս մէջ ամէն բան իրեն վիճակին յարմար լաւ ու աղէկ է , ու մէյմէկ բանի օգտակար է . և թէ պէտ երբեմն վնասակար ալ ըլլայ , բայց ան ալ կամ գէշ կերպով գործա-

ծելէն է , և կամ ինչ բանի համար որ ստեղծուած է՝ անոր համար չգործածելէն առաջ կուգայ : Իսկէց է որ մէկ կերակուր մը աս կենդանւոյն մննդարար է , և ուրիշի մահուան պատճառ կ'ըլլայ . ան բոյսն ալ որ շատ անգամ թունաւոր կը սեպուի՝ ուրիշ դիպուածոց մէջ զօրաւոր գեղթափ կ'ըլլայ : Իսկ բանս յայտնի է մուլախինդ՝ ըսուած խոտին վրայ , որ հին ատենը միայն թոյն կը կարծուէր , բայց հիմա զանազան փորձերով յայտնի եղաւ որ ասով շատ օգուտներ ալ կ'ըլլան եղեր :

Ոշխարհքիս վրայի բոյսերուն թիւն ու տեսակը խիստ շատ է . բայց ամէնն ալ մարդկանց համար ստեղծուած չեն , հապա ոմանք կենդանեաց համար , ոմանք զարդարանք ըլլալու համար , շատն ալ բժշկութեան մէջ գործածելու համար եղած են . և ասոնք կենդանեաց ու մարդկանց հիւանդութեանցը դէմ զօրաւոր գեղեր կ'ըլլան՝ թէ որ մէջը վնասակար նիւթեր չխառնուին : Իսպէս կըրնանք ըսել նաև շատ կենդանեաց վրայ , որոնք թէպէտ և մեզի վնասակար են , բայց ուրիշ կենդանեաց գեղ ու մննդարար կերակուր կ'ըլլան :

Կատ հաւեր որդերով ու ձձիներով կ'ապրին , որ մեզի շատ վնասակար կ'երեւնան . ընտանի թունուններուն շատն ալ մամուկ կ'ուտեն . իսկ սիրամարգն ու արագիլը օձու միս շատ կը սիրեն : Այսոնցմէ զատ՝ թէ որ մտածենք թէ ինչ զօրաւոր գեղեր կ'ըլլան թունաւոր բոյսերէ ու կենդանիներէ , ան ատեն արարածոց վրայ երեցած լուսուծութիւնն ու բարութիւնը արդարացընելու համար՝ շատ աշխատանք պէտք չըլլար : Իսկէ զատ հետագայ խորհրդածութիւններն ալ զմեղ աւելի կրնան համոզել . վասն զի վնասակար բոյսերուն ու կենդանեաց թիւը՝ օգտակարներուն համեմատութեամբ գրե-